# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Մեղրի համայնք, Զորավար Անդրանիկ 2
հեռ. (0286)4 34 23 էլ-հասցե՝ meghri.syuniq@mta.gov.am

**Թիվ 900**
*21 ՀՈՒԼԻՍԻ 2017թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N66-Ա, N67-Ա, N68-Ա, N69-Ա, N70-Ա, N71-Ա, N72-Ա, N73-Ա, N74-Ա, N75-Ա, N76-Ա որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

*Կատ.՝ Լ. Մեժլումյան*

7133
25 07. 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 հուլիսի 2017 թվական N66 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N13 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

2.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր, Վահրավար բնակավայրերում գտնվող, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

4.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար բնակավայրում սեփականության իրավունքով հողամաս ձեռք բերելու մասին:

6.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 5-ի N55-Ա որոշման 1-ին և 4-րդ կետերը չեղյալ ճանաչելու մասին:

8. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N67 –Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1)-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելուն, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 54,7802 հեկտար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N20062017-09-0001, ծածկագիր՝ 09-051-0409-0024) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր» գործառնական նշանակության՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող պոչամբարի ընդլայնման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N68 –Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՎԱՆԻՁՈՐ, ԱԼՎԱՆՔ, ՆՌՆԱՁՈՐ, ՎԱՀՐԱՎԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29)-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1)-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 20.06.2017թ. N59 դրական եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր և Վահրավար բնակավայրերում գտնվող՝

1) Պետական սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների հողերից 0.05 հա /2 միավոր/ բնապահպանական հողամաս՝ /09-088-0101-0042-հց, 09-074-0434-0002-հց/,

2) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.2 հա /11 միավոր/, որից 0,03 հա արոտավայր /09-074-0407-0001-հց 2 միավոր/ և 0,17հա այլ հողատեսք /09-074-0426-0070, 09-074-0426-0001-հց, 09-074-0443-0039, 09-009-0101-0001-հց, 09-009-0135-0002-հց, 09-009-0137-0003, 09-066-0123-0001-հց, 09-066-0112-0001-հց, 09-066-0139-0001-հց/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ բջջային կապի կայանների շահագործման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) | Դեմ(0) | Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19 ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2017 թվական N69 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանի 9-րդ կետի 5)-րդ ենթակետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրում գտնվող՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը (համաձայն հավելվածի), որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի հետ կապված անճշտության ուղղման նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

| ՀՀ | Կադաստրային ծածկագիր | Հողամասի չափը (հա) | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|
| 1 | 09-0066-0136-0001 | 0,09935<br>0,11405 | Գյուղատնտեսական պտղատու |
| 2 | 09-0066-0127-0001 | 0,14624 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 3 | 09-0066-0137-0009 | 0,,84148 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 4 | 09-0066-0137-0010 | 0,46088 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 5 | 09-0066-0003-0002 | 0,10395 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 6 | 09-0066-0001-0005 | 0,13292 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 7 | 09-0066-0137-0001 | 0.99440 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 8 | 09-0066-0001-0006 | 0.15952 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 9 | 09-0066-0001-0007 | 0.56440 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 10 | 09-0066-0001-0009<br>09-0066-0001-0010 | 0.39821 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 11 | 09-0066-0001-0002 | 0.74484 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 12 | 09-0066-0137-0001 | 0,18 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 13 | 09-0066-0001-0004 | 0.16249 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 14 | 09-0066-0001-0008 | 0.30258 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 15 | 09-0066-0001-0011 | 0.65293 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 16 | 09-0066-0005-0002 | 0.12909 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 17 | 09-0066-0005-0003 | 0.60563 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 18 | 09-0066-0009-0002 | 0.21233 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում |
| 19 | 09-0066-0112-0001 | 0.589 | Գյուղատնտեսական պտղատու այգի |
| 20 | 09-0066-0112-0009 | 1.06579 | Գյուղատնտեսական պտղատու այգի |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N70 –Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1)-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելուն, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,14837 հեկտար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N20062017-09-0001, ծածկագիր՝ 09-051-0409-0024) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակության՝ Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում գյուղատնտեսական շուկա, տոնավաճառ և ավտոբուսային կանգառ կառուցելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

Կողմ (11)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N71 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՎԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Թույլատրել Մեղրի համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար գյուղի 5-րդ փողոցի թիվ 25/1 հասցեում գտնվող, մեկ քառակուսի մետրը 260 (երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով ձեռք բերելու ֆիզիկական անձի (Մարո Հունանի Քրիստափորյան, անձնագիր AR0309068, տրված 12.06.2017թ., 045-ի կողմից) սեփականություն հանդիսացող 0.097 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-088-013-0017) հողամասը:

2. Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N72 –Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1)-ին կետի և 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 8-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3.1 կետի 1) և 2) ենթակետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 23.06.2017թ. N65 դրական եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0,05383 հա և 0,04291 հա (ծածկագիր՝ 09-039-0517-0001 և 09-039-0505-0001) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի հողեր» գործառնական նշանակությամբ՝ ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2017 թվական N73 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼՎԱՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N55-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ԿԵՏԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ և 42)-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ և 94-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին՝

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ հողատեսքեր նշանակության 09-009-0126-0029 կադաստրային ծածկագրով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N03052017-09-0025) 0,1555հա հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, վարձակալության իրավունքով, մրցութային կարգով տրամադրել ՝ մեկնարկային վարձավճարի գին սահմանելով 1ք.մ.-ի համար 3 (երեք) ՀՀ դրամ:
2.Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին» N55-Ա որոշման 1-ին և 4-րդ կետերը:
3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (11) | Դեմ(0) | Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2017 թվական N74 –Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N36-Ն որոշումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 09-005-0068-0015 կադաստրային ծածկագրով 0.0062 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի կատեգորիա:

2.Սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Կողմ (11)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ... ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 հուլիսի 2017 թվական N75 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները ՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ստեղծել գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Ստեղծել սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Ստեղծել իրավական և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 3-ի:
4.Ստեղծել ֆինանսավարկային , բյուջետային և տնտեսական հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 4-ի:
5.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (11) | Դեմ(0) | Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. հուլիսի 19
ք. Մեղրի

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 19-ի N75-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ԳԻՏՈՒԹՅԱՆ,ԿՐԹՈՒԹՅԱՆ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Աղամյան Կարեն - համայնքի ավագանու անդամ,

2.Միքաելյան Սամվել - համայնքի ավագանու անդամ,

3.Զաքարյան Հրայր - համայնքի ավագանու անդամ

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 19-ի N75-Ա որոշման

# ԿԱԶՄ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Աղամյան Հարություն - համայնքի ավագանու անդամ,

2.Հովհաննիսյան Հարութ - համայնքի ավագանու անդամ,

3.Գևորգյան Գագիկ - համայնքի ավագանու անդամ.

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 19-ի N75-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Գևորգյան Խաչատուր - համայնքի ավագանու անդամ,

2.Մարտիրոսյան Կոստանտ - համայնքի ավագանու անդամ,

3.Ադամյան Աշոտ - համայնքի ավագանու անդամ,

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 19-ի N75-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հակոբյան Գարեգին - համայնքի ավագանու անդամ,

2. Հայրապետյան Սուրեն - համայնքի ավագանու անդամ,

3. Գևորգյան Խաչատուր - համայնքի ավագանու անդամ,

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 հուլիսի 2017 թվական N76 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 13 հունիսի 2003 թվականի թիվ 882-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող 2007 թվականի արտադրության HOVER 2,4 մակնիշի 059 LL 70 պետ. Համարանիշի ավտոմեքենան օտարել դասական բաց աճուրդով՝ մեկնարկային գին սահմանելով 1020000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամ (ըստ «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից 17 հուլիսի 2017 թվականին տրված ավտոմեքենայի շուկայական գնահատման թիվ ԱՄ011/17 հաշվետվության:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող 2008 թվականի արտադրության VAZ 21214-130-20 մակնիշի 058 LL 70 պետ. համարանիշի ավտոմեքենան օտարել դասական բաց աճուրդով՝ մեկնարկային գին սահմանելով 715000 ( յոթ հարյուր տասնհինգ հազար ) ՀՀ դրամ (ըստ «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից 17 հուլիսի 2017 թվականին տրված ավտոմեքենայի շուկայական գնահատման թիվ ԱՍ011/17 հաշվետվության:

3.Սահմանել, որ՝

1)առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում են աճուրդներ,ընդ որում, յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցվում է վերջին աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով.

2) գնորդի կողմից փոխհատուցման է ենթակա գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

4.Առաջարկել համայնքի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել աճուրդը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ